

**Զինաստանի ժողովրդական Հանրապետության
գլխավոր մաքսային վարչության հրաման**

թիվ 249

Սույնով իրականացվում է «ՉԺՀ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովման միջոցների» հրապարակումը, որոնք քննարկվել եւ ընդունվել են Գլխավոր մաքսային վարչության 2021 թվականի մարտի 12-ի ծառայողական խորհրդակցության ժամանակ: Սույն միջոցներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ ուժը կորցնում են Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2011 սեպտեմբերի 13-ի թիվ 144 հրամանին համապատասխան հաստատված եւ Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 184 հրամանով ու Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանով վերանայված՝ «Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովման միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2000 թվականի փետրվարի 22-ի թիվ 20 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի ապրիլի 28-ի թիվ 238 հրամանին համապատասխան վերանայված՝ «Արտահանվող մեղրի նկատմամբ տեսչական ստուգման եւ կարանտինի վարչարարության մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2011 թվականի հունվարի 4-ի թիվ 135 որոշմանը համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Ջրային արոյունահանման ներմուծվող եւ արտահանվող արտադրանքի տեսչական ստուգման եւ կարանտինի վերահսկողության եւ վարչարարության մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2011 թվականի հունվարի 4-ի թիվ 136 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Ներմուծվող եւ արտահանվող մսամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի

վերահսկողության ու վարչարարության մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2013 թվականի հունվարի 24-ի թիվ 152 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Ներմուծվող եւ արտահանվող կաթնամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2017 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 192 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գրանցումը կառավարելու մասին կարգը»:

Վարչության պետ՝ Նի Յուլեֆեն

14 ապրիլի 2021 թվականի

ՉԺՅ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովման միջոցները

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Սույն միջոցները մշակվել են ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության, մարդկանց կյանքի եւ առողջության, կենդանիների ու բույսերի պաշտպանության ապահովման նպատակով՝ «Սննդամթերքի անվտանգության մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» (այսուհետ՝ «Սննդամթերքի անվտանգության մասին օրենք») եւ դրա կիրառման կանոններին, «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային օրենքին», «Ներմուծվող-արտահանվող ապրանքների տեսչական ստուգման մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» եւ դրա կիրառման կանոններին, «Ներմուծվող կենդանիների ու բույսերի կարանտինի մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» եւ դրա կիրառման կանոններին, «Սահմանային սանիտարակարանտինային հսկողության մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» եւ դրա կիրառման կանոններին, «Գյուղատնտեսական արտադրանքի որակի եւ անվտանգության ապահովման մասին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքին» ու «Սննդամթերքի եւ այլ մթերքների հսկողության ու անվտանգության կառավարման ուժեղացման մասին Պետական խորհրդի հատուկ դրույթներին», ինչպես նաեւ այլ օրենսդրական ու վարչաիրավական նորմերին համապատասխան:

Հոդված 2. Սույն միջոցներն անհրաժեշտ է պահպանել գործունեության հետեւյալ տեսակները վարելիս՝

1) ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ արտադրական եւ գործառնական գործունեություն.

2) ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ արտադրական եւ գործառնական գործունեություն վարող կազմակերպությունների կողմից մաքսային վերահսկողության եւ կառավարման իրականացում, ինչպես նաեւ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովում:

Ներմուծվող եւ արտահանվող սննդային հավելումների ու սննդամթերքի հետ կապված մթերքների նկատմամբ արտադրական եւ գործառնական գործունեությունն իրականացվում է Գլխավոր մաքսային վարչության համապատասխան դրույթների համաձայն:

Հոդված 3. Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովման մասով աշխատանքը կատարվում է անվտանգության, կանխարգելման, ռիսկերի կառավարման, ամբողջ գործընթացի հսկողության եւ միջազգային համատեղ կառավարման սկզբունքներին համապատասխան:

Հոդված 4. Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ արտադրական եւ գործառնական գործունեություն վարող կազմակերպությունները պատասխանատվություն են կրում այն ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության համար, որոնց նկատմամբ դրանք իրականացնում են արտադրական եւ գործառնական գործունեություն:

Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ արտադրական եւ գործառնական գործունեություն վարող կազմակերպությունները ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ պարտավոր են իրականացնել արտադրական եւ գործառնական գործունեություն՝ Չինաստանի կողմից կնքված կամ Չինաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերին ու համաձայնագրերին համապատասխան, ինչպես նաեւ օրենսդրական ու վարչաիրավական նորմերին ու սննդամթերքի անվտանգությանը վերաբերող՝ Չինաստանի պետական ստանդարտներին համապատասխան: Բացի այդ, տվյալ կազմակերպությունները, օրենքին համապատասխան, պարտավոր են ընդունել վերահսկողություն եւ կառավարում, ապահովել ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգությունը, կրել պատասխանատվություն հանրության առջեւ, ինչպես նաեւ կրել սոցիալական պատասխանատվություն:

Հոդված 5. Գլխավոր մաքսային վարչությունը պատասխանատվություն է կրում ամբողջ երկրի տարածքով ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերահսկողության ու կառավարման համար:

Բոլոր մակարդակների մաքսային մարմինները պատասխանատվություն են կրում ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերահսկողության ու կառավարման համար այն շրջաններում, որոնք գտնվում են դրանց իրավազորության ներքո:

Հոդված 6. Մաքսատունն օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերահսկողության եւ կառավարման մակարդակը բարձրացնելու համար:

Հոդված 7. Մաքսատունն ուժեղացնում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության հարցերի վերաբերյալ քարոզչությունը եւ լուսաբանումը, ինչպես նաեւ իրականացնում է օրենսդրական եւ վարչաիրավական նորմերի, եւ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող պետական ստանդարտների, ինչպես նաեւ սննդամթերքի անվտանգության ոլորտում գիտելիքների հանրայնացումը:

Մաքսատունն ամրապնդում է միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա կառավարական հիմնարկների, սննդային արդյունաբերության օտարերկրյա ասոցիացիաների ու սպառողների օտարերկրյա ասոցիացիաների հետ սննդամթերքի անվտանգության հարցերով փոխանակումները եւ համագործակցությունը՝ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության համատեղ կառավարման միջազգային մոդել ստեղծելու նպատակով:

Հոդված 8. Մաքսային աշխատակիցները, որոնք զբաղվում են ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերահսկողությամբ եւ կառավարմամբ, պարտավոր են տիրապետել համապատասխան մասնագիտական գիտելիքների:

Գլուխ 2. Սննդամթերքի ներմուծումը

Հոդված 9. Ներմուծվող սննդամթերքը պետք է համապատասխանի օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին, ինչպես նաեւ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող՝ Չինաստանի պետական ստանդարտներին: Եթե Չինաստանի կողմից կնքված կամ Չինաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերում եւ համաձայնագրերում առկա են հատուկ պահանջներ, ապա ներմուծվող սննդամթերքը պետք է համապատասխանի նաեւ միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի պահանջներին:

Ներմուծվող սննդամթերքը, որի նկատմամբ չկան սննդամթերքի անվտանգությանը վերաբերող պետական ստանդարտներ, պետք է համապատասխանի այն ստանդարտներին, որոնք ժամանակավորապես կիրառվում են Պետական խորհրդին առընթեր առողջապահության կառավարման մարմնի որոշման համաձայն:

Նոր սննդային հոլմքից արտադրված սննդամթերքը պետք է ստանա Պետական խորհրդին առընթեր առողջապահության կառավարման մարմնի կողմից տրվող սանիտարական լիցենզիա՝ «Սննդամթերքի անվտանգության մասին օրենքի» 37-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հոդված 10. Մաքսատունն անցկացնում է ներմուծվող սննդամթերքի համապատասխանության գնահատում՝ ներմուծվող եւ արտահանվող ապրանքների տեսչական ստուգման մասին համապատասխան օրենսդրական եւ վարչաիրավական նորմերի համաձայն:

Ներմուծվող սննդամթերքի համապատասխանության գնահատման մասով գործունեությունը ներառում է՝ դեպի Չինաստան սննդամթերք արտահանող օտարերկրյա պետությունների (տարածաշրջանների) (այսուհետ՝ «օտարերկրյա պետություններ (տարածաշրջաններ)») սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի գնահատում եւ փորձաքննություն, օտարերկրյա արտադրական ձեռնարկությունների գրանցում, ներմուծողների եւ արտահանողների գրանցում եւ համապատասխանության հաստատում, ներմուծվող կենդանիների ու բույսերի տեսչական ստուգում եւ կարանտին, կից ներկայացվող սերտիֆիկատների համապատասխանության ստուգում, փաստաթղթերի փորձաքննություն, տեղում տեսչական ստուգման իրականացում, վերահսկողություն ու ընտրանքային ստուգում, ներմուծմանը եւ վաճառքին վերաբերող գրառումների ստուգում, ինչպես նաեւ տարբեր միջոցների համադրություն:

Հոդված 11. Գլխավոր մաքսային վարչությունը կարող է գնահատել եւ ստուգել սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգը եւ օտարերկրյա պետությունների (տարածաշրջանների) սննդամթերքի անվտանգության վիճակը, ինչպես նաեւ, գնահատման ու ստուգման արդյունքների համաձայն, սահմանել համապատասխան տեսչական ու կարանտինային պահանջներ:

Հոդված 12. Հետեւյալ հանգամանքներից ցանկացածի դեպքում Գլխավոր մաքսային վարչությունն օտարերկրյա պետությունների (տարածաշրջանների) նկատմամբ կարող է անցկացնել գնահատում եւ ստուգում՝

1) օտարերկրյա պետության (տարածաշրջանի)՝ սննդամթերքի առանձին կատեգորիայի (տեսակի) դեպի Չինաստան արտահանման դիմումը տրվում է առաջին անգամ.

2) օրենսդրական եւ վարչաիրավական նորմերում, ինչպես նաեւ օտարերկրյա պետությունների (տարածաշրջանների) սննդամթերքի անվտանգության ու կենդանիների եւ բույսերի կարանտինի հարցերով կազմակերպություններում կատարվել են էական փոփոխություններ.

3) օտարերկրյա պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինը դիմում է ներկայացնում դեպի Չինաստան արտահանվող սննդամթերքի առանձին կատեգորիայի (տեսակի) նկատմամբ տեսչական եւ կարանտինային պահանջների էական ճշգրտման մասին.

4) օտարերկրյա պետություններում (տարածաշրջաններում) կենդանիների եւ բույսերի շրջանում տեղի են ունեցել խոշոր համաճարակներ կամ սննդամթերքի անվտանգության հետ կապված միջադեպեր.

5) մաքսատան կողմից դեպի Չինաստան արտահանվող սննդամթերքի մեջ հայտնաբերվել են լուրջ խնդիրներ, որոնք կարող են վկայել կենդանիների ու բույսերի շրջանում համաճարակի կամ սննդամթերքի անվտանգության պոտենցիալ սպառնալիքների առկայության մասին.

6) այլ հանգամանքներ, որոնցով պահանջվում է գնահատման եւ ստուգման անցկացում:

Հոդված 13. Օտարերկրյա պետությունների (տարածաշրջանների) սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի գնահատումը եւ հաստատումը ներառում են հետեւյալ բովանդակության գնահատում եւ հաստատում՝

1) սննդամթերքի անվտանգության, կենդանիների ու բույսերի կարանտինի հետ կապված օրենսդրական եւ վարչաիրավական նորմեր.

2) սննդամթերքի անվտանգության վերահսկողության եւ կառավարման կազմակերպում.

3) կենդանիների ու բույսերի շրջանում տարածված համաճարակային իրավիճակներ եւ տվյալ իրավիճակների կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասով միջոցառումներ.

4) ախտածին միկրոօրգանիզմների, գյուղատնտեսական ու անասնաբուժական պատրաստուկների ու աղտոտող նյութերի կառավարում եւ

հսկողություն.

5) սննդամթերքի արտադրման, վերամշակման, տրանսպորտային փոխադրման եւ պահպանման անվտանգության նկատմամբ սանիտարական հսկողություն.

6) արտահանվող սննդամթերքի անվտանգության վերահսկողություն եւ կառավարում.

7) սննդամթերքի անվտանգությանը վերաբերող՝ պաշտպանության, հետազոծման ու հետկանչի համակարգ.

8) արտակարգ իրավիճակների վաղ կանխարգելման ու դրանց արձագանքման մեխանիզմներ.

9) տեխնիկական օժանդակության հնարավորություններ.

10) այլ իրավիճակներ, որոնք կապված են կենդանիների ու բույսերի շրջանում համաճարակների ու սննդամթերքի անվտանգության հետ:

Չոդված 14. Գլխավոր մաքսային վարչությունը կարող է ներգրավել փորձագետների՝ տվյալների վերլուծության, տեսչական տեսաստուգման, տեղում տեսչական ստուգման կամ դրանց համադրության միջոցով գնահատում եւ ստուգում անցկացնելու համար:

Չոդված 15. Գլխավոր մաքսային վարչությունը ներգրավում է փորձագետների՝ պետությունների (տարածաշրջանների) կողմից ներկայացված գնահատման եւ ստուգման ենթակա գրավոր դիմումների եւ գնահատման հարցաթերթիկների նյութերի ուսումնասիրման համար՝ ներառյալ նյութերի իսկությունը, ամբողջականությունը եւ վավերականությունը: Համաձայն նյութերի ստուգման արդյունքների՝ Գլխավոր մաքսային վարչությունը կարող է դիմել համապատասխան պետությունների (տարածաշրջանների) իրավասու մարմիններին՝ բացակայող տվյալները կամ նյութերը համալրելու խնդրանքով:

Գլխավոր մաքսային վարչությունը կարող է ներգրավել փորձագետների՝ այն պետությունների (տարածաշրջանների) սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի նկատմամբ տեսչական տեսաստուգում կամ տեղում տեսչական ստուգում անցկացնելու համար, որոնց ներկայացված նյութերն ստուգվել են: Հայտնաբերված խնդիրները կարող են վերացվել համապատասխան

պետությունների (տարածաշրջանների) իրավասու մարմինների կամ ձեռնարկությունների կողմից:

Համապատասխան պետությունները (տարածաշրջանները) գնահատման եւ ստուգման ժամանակ պետք է անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն:

Հոդված 16. Գլխավոր մաքսային վարչությունը կարող է դադարեցնել գնահատումը եւ ստուգումը, ինչպես նաեւ ծանուցել համապատասխան պետությունների (տարածաշրջանների) իրավասու մարմիններին այն երկրներում (տարածաշրջաններում), որտեղ անցկացվում է գնահատում եւ ստուգում՝ հետեւյալ հանգամանքներից ցանկացածի առաջացման դեպքում.

1) գրավոր գնահատման հարցաթերթիկներ ստանալուց հետո 12 ամսվա ընթացքում հետադարձ կապի բացակայություն,

2) Գլխավոր մաքսային վարչությունից ծանուցում ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում պահանջվող լրացուցիչ տվյալներն ու նյութերը չներկայացնելը,

3) կենդանիների ու բույսերի շրջանում խոշոր համաճարակների կամ սննդամթերքի անվտանգության ոլորտում խոշոր միջադեպերի անսպասելի առաջացում,

4) տեսչական տեսաստուգումը կամ տեղում տեսչական ստուգումն ավարտելու համար չինական կողմի հետ համագործակցության անհնարինություն, կամ արդյունավետորեն ճշտումներ կատարելու անհնարինություն,

5) գնահատման եւ ստուգման անցկացումը դադարեցնելու վերաբերյալ դիմումի ներկայացում:

Նախորդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված հանգամանքների առաջացման դեպքում համապատասխան պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինները կարող են դիմում ներկայացնել՝ հատուկ պատճառներով պայմանավորված ժամկետի երկարաձգման մասին, եւ Գլխավոր մաքսային վարչության համաձայնությունն ստանալուց հետո ներկայացնել համապատասխան նյութերը՝ Գլխավոր մաքսային վարչության կողմից սահմանված ժամկետներում:

Հոդված 17. Գնահատում եւ ստուգում անցկացնելուց հետո Գլխավոր մաքսային վարչությունը երկրի (տարածաշրջանի) իրավասու մարմիններին տեղեկացնում է գնահատման եւ ստուգման արդյունքների մասին:

Հոդված 18. Գլխավոր մաքսային վարչությունն իրականացնում է Չինաստան սննդամթերք արտահանող օտարերկրյա արտադրական ձեռնարկությունների գրանցումը եւ հրապարակում է գրանցված ձեռնարկությունների ցանկը:

Հոդված 19. Օտարերկրյա արտահանողները կամ Չինաստան սննդամթերք արտահանող գործակալները (այսուհետ՝ «օտարերկրյա արտահանողներ կամ գործակալներ») պարտավոր են Գլխավոր մաքսային վարչություն դիմում ներկայացնել՝ գրանցման ընթացակարգն անցկացնելու համար:

Սննդամթերք արտադրողները պարտավոր են դիմում ներկայացել տեղի մաքսատուն:

Գրանցման ընթացակարգերն անցկացնելիս սննդամթերքի օտարերկրյա արտահանողները, գործակալները կամ ներմուծողները պարտավոր են պատասխանատվություն կրել տրամադրվող նյութերի իսկության եւ հավաստիության համար:

Սննդամթերքի օտարերկրյա արտահանողների, գործակալների եւ ներմուծողների ցանկը հրապարակվում է Գլխավոր մաքսային վարչության կողմից:

Հոդված 20. Գրանցման ցանկի մեջ որեւէ փոփոխություն առաջանալու դեպքում սննդամթերքի օտարերկրյա արտահանողները, գործակալները եւ ներմուծողները փոփոխություններ կատարելու օրվանից 60 օրվա ընթացքում պետք է դիմեն գրանցման մարմիններին՝ փոփոխությունների գրանցման ընթացակարգն անցնելու համար:

Եթե մաքսատան կողմից բացահայտվի, որ գրանցման ժամանակ սննդամթերքի օտարերկրյա արտահանողների, գործակալների կամ ներմուծողների կողմից տրամադրված տեղեկությունները ճիշտ չեն կամ փոփոխությունների բովանդակությունը ժամանակին չի տրամադրվել, ապա մաքսատունը կարող է պահանջել սահմանված ժամկետում ուղղումներ կատարել:

Հոդված 21. Սննդամթերք ներմուծողները պետք է ստեղծեն սննդամթերքի ներմուծմանը եւ վաճառքին վերաբերող գրառումների հաշվառման համակարգ, գրանցեն արտադրվող կամ ներմուծվող արտադրանքի անվանումները, զտաքաշը/մասնագրերը, քանակը, արտադրման ամսաթվերը, խմբաքանակների համարները, պիտանիության ժամկետները, օտարերկրյա արտահանողների եւ գնորդների անվանումները, հասցեները եւ կոնտակտային տեղեկատվությունը,

մատակարարման ամսաթվերը եւ այլ տեղեկություններ, ինչպես նաեւ պահպանեն համապատասխան սերտիֆիկատները: Գրառումների ու սերտիֆիկատների պահպանման ժամկետը պետք է կազմի սննդամթերքի պիտանիության ժամկետը լրանալուց հետո 6 ամսից ոչ պակաս. պիտանիության կոնկրետ ժամկետի բացակայության դեպքում պահպանման ժամկետը վաճառքի պահից սկսած՝ պետք է 2 տարուց ավելի կազմի:

Հոդված 22. Սննդամթերք ներմուծողները օտարերկրյա արտահանողների եւ արտադրական ձեռնարկությունների համար պարտավոր են ստեղծել աուդիտի համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով հետեւյալին՝

1) սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի հսկողության միջոցառումների մշակում եւ իրականացում.

2) օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին, ինչպես նաեւ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող Չինաստանի պետական ստանդարտներին սննդամթերքի համապատասխանության ապահովում:

Հոդված 23. Մաքսատունը, օրենքին համապատասխան, իրականացնում է սննդամթերք ներմուծողների աուդիտորական գործունեության վերահսկողություն եւ ստուգում: Սննդամթերք ներմուծողները պարտավոր են ակտիվորեն համագործակցել եւ ներկայացնել վավերական տեղեկություններ ու նյութեր:

Հոդված 24. Ռիսկերի կառավարման կարիքներին համապատասխան՝ մաքսատունը կարող է որոշել նավահանգիստը եւ կոնկրետ տեղում անցկացնել ներմուծվող սննդամթերքի տեսչական ստուգում: Տեսչական ստուգում անցկացնելու համար կոնկրետ նավահանգիստների եւ տեղերի ցանկը հրապարակվում է Գլխավոր մաքսային վարչության կողմից:

Հոդված 25. Սննդամթերքի ներմուծումն իրականացնելիս սննդամթերք ներմուծողները կամ նրանց գործակալները, օրենքին համապատասխան, պարտավոր են մաքսատուն ներկայացնել վավերական հայտարարագիր:

Հոդված 26. Մաքսատունն անցկացնում է ներմուծվող այն սննդամթերքի կարանտինը, որը, օրենքին համապատասխան, ներմուծման ժամանակ պետք է ենթարկվի կարանտինի:

Հոդված 27. Մաքսատունն իրականացնում է ներմուծվող այն սննդամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի կառավարում, որը, օրենքին

համապատասխան, պետք է անցնի ներմուծվող կենդանիների ու բույսերի տեսչական ստուգում եւ կարանտին: Նախքան առեւտրային պայմանագիրը կամ համաձայնագիրն ստորագրելը՝ սննդամթերք ներմուծողները պետք է ստանան ներմուծվող կենդանիների ու բույսերի կարանտինի լիցենզիա:

Հոդված 28. Վերահսկողության եւ կառավարման կարիքներին համապատասխան՝ մաքսատուները տեղում անցկացնում է ներմուծվող սննդամթերքի տեսչական ստուգում՝ ներառյալ, բայց չսահմանափակելով հետեւյալով՝

1) համապատասխանում են արդյոք տրանսպորտային միջոցները եւ պահպանման վայրերը անվտանգության պահանջներին եւ սանիտարական նորմերին.

2) համապատասխանում են արդյոք բեռնարկղերի համարները, կապարակիքների նույնականացման համարները, ներքին եւ արտաքին փաթեթվածքների վրա մականշվածքների բովանդակությունը, ինչպես նաեւ ապրանքի փաստացի վիճակը հայտարարագրում եւ կից ներկայացվող փաստաթղթերում ներկայացված տեղեկություններին.

3) համապատասխանում է արդյոք կենդանական եւ բուսական ծագման սննդամթերքը, ինչպես նաեւ փաթեթավորման եւ ցամքարային նյութերը «Ներմուծվող եւ արտահանվող կենդանիների եւ բույսերի կարանտինի մասին կիրառման կանոնների» 22-րդ հոդվածին.

4) համապատասխանում են արդյոք ներքին եւ արտաքին փաթեթվածքները սննդամթերքի անվտանգությանը վերաբերող պետական ստանդարտներին, ինչպես նաեւ առկա են արդյոք աղտոտվածություններ, վնասվածքներ, խոնավություն կամ արտահոսքեր.

5) համապատասխանում են արդյոք ներքին եւ արտաքին փաթեթվածքի պիտակները, մականշվածքները եւ ցուցումները օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին ու սննդամթերքի անվտանգությանը վերաբերող պետական ստանդարտներին ու Գլխավոր մաքսային վարչության դրույթներին.

6) համապատասխանում են արդյոք սննդամթերքի զգայորոշման հատկությունները սննդամթերքի պատշաճ հատկություններին.

7) համապատասխանում է արդյոք սառեցված եւ պաղեցված մթերքների

թարմության մակարդակը եւ հաստաշերտի ջերմաստիճանը, կան արդյոք վնասվածքներ, համապատասխանում է արդյոք սառեցված եւ պաղեցված մթերքների՝ շրջապատող միջավայրի ջերմաստիճանը ստանդարտներին, նորմալ են աշխատում արդյոք սարքավորումները եւ սառնարանային շղթայի ջերմաստիճանի հսկողության միջոցները, համապատասխանում են արդյոք ջերմաստիճանի գրառումները սահմանված պահանջներին, անհրաժեշտության դեպքում կարող է անցկացվել խոհարարական թեստ:

Հոդված 29. Մաքսատունը պարտավոր է մշակել ներմուծվող սննդամթերքի անվտանգության վերահսկողության ու ընտրանքային ստուգման ամենամյա պլան, ինչպես նաեւ ներմուծվող սննդամթերքի անվտանգության վերահսկողության ու ընտրանքային ստուգման հատուկ պլաններ եւ կազմակերպել դրանց իրագործումը:

Հոդված 30. Ներմուծվող սննդամթերքի փաթեթվածքը, պիտակները եւ մականշվածքը պետք է համապատասխանեն օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին ու սննդամթերքի անվտանգությանը վերաբերող՝ Չինաստանի պետական ստանդարտներին. եթե, օրենքին համապատասխան, պահանջվում է ձեռնարկի առկայությունը, ապա դա պետք է կազմվի չինարենով:

Ներմուծվող թարմ եւ պաղեցված մսամթերքի ներքին ու արտաքին փաթեթվածքը պետք է լինի ամուր եւ ունենա հստակ ու պարզ մականշվածքներ չինարենով եւ անգլերենով կամ չինարեն ու արտահանող պետության (տարածաշրջանի) լեզվով, որոնք պետք է պարունակեն հետեւյալը՝ ծագման երկիրը (տարածաշրջանը), արտադրանքի անվանումը, արտադրական ձեռնարկության գրանցման համարը, արտադրանքի խմբաքանակի համարը. արտաքին փաթեթվածքի վրա չինարենով պետք է նշված լինեն մասնագրերը, ծագման վայրը (կոնկրետ տարածաշրջանը/ գավառը/ քաղաքը), նշանակման վայրը, արտադրման ամսաթիվը, պիտակիության ժամկետը, պահպանման ջերմաստիճանը եւ այլ բովանդակություն: Նշանակման վայրը պետք է լինի Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը: Փաթեթվածքի վրա պետք է առկա լինի արտահանող պետության (տարածաշրջանի) տեսչական ստուգման եւ կարանտինի պաշտոնական նշանը:

Ջրային արդյունահանման ներմուծվող արտադրանքի ներքին եւ արտաքին փաթեթվածքը պետք է լինի ամուր ու ունենա հստակ եւ ընթերցելի մականշվածքներ չինարենով եւ անգլերենով կամ չինարենով եւ արտահանող պետության

(տարածաշրջանի) լեզվով, որոնք պարունակում են հետեւյալը՝ առեւտրային եւ գիտական անվանումները, մասնագրերը, արտադրման ամսաթիվը, խմբաքանակի համարը, պիտանիության ժամկետը եւ պահպանման պայմանները, արտադրման եղանակը (ծովային ձկնորսություն, քաղցրահամ ջրերի ձկնորսություն, բուծում), արտադրման տարածաշրջանը (ծովային ձկնորսության ջրատարածքը, քաղցրահամ ջրերի ձկնորսության պետությունը կամ տարածաշրջանը, այն պետությունը կամ տարածաշրջանը, որտեղ տեղակայված է բուծման վայրը), մասնակցություն ունեցող բոլոր արտադրական եւ վերամշակող ձեռնարկությունների (ներառյալ ձկնորսական նավը, վերամշակող նավը, տրանսպորտային նավը եւ անկախ սառնարանային պահեստը) անվանումները, գրանցման համարները եւ հասցեները (կոնկրետ տարածաշրջանը/գավառը/քաղաքը): Նշանակման վայրը պետք է լինի Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը:

Ներմուծվող բուժիչ-կանխարգելիչ սննդամթերքի եւ մասնագիտացված դիետիկ սննդամթերքի մականշվածքները չինարեւոյ պետք է տպագրված լինեն նվազագույն վաճառքային փաթեթվածքի վրա, մականշվածքն արգելվում է սոսնձել:

Ներմուծվող սննդամթերքի ներքին եւ արտաքին փաթեթվածքի վրա մակնշման հատուկ կանոնների առկայության դեպքում պետք է պահպանվեն համապատասխան կանոնները:

Հոդված 31. Ներմուծվող սննդամթերքը նավահանգիստ ժամանելուց հետո պետք է պահվի մաքսատան կողմից սահմանված կամ թույլատրված վայրում. տեղափոխման անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է ստանալ մաքսատան թույլտվությունը եւ ձեռնարկել անվտանգության անհրաժեշտ միջոցները՝ մաքսատան պահանջներին համապատասխան:

Սահմանված եւ թույլատրված վայրերը պետք է համապատասխանեն օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին ու սննդամթերքի անվտանգությանը վերաբերող պետական ստանդարտներին:

Հոդված 32. Խոշոր ծավալաչափի չբաժնեծրարված ներմուծվող սննդամթերքը պետք է ստուգվի բեռնաթափման նավահանգստում՝ մաքսատան պահանջներին համապատասխան:

Հոդված 33. Սննդամթերքի ներմուծումն իրականացվում է մաքսատան՝

համապատասխանության ստուգումը հաջողությամբ անցկացնելուց հետո:

Ներմուծվող սննդամթերքի՝ մաքսատանը համապատասխանության ստուգումը չանցնելուց հետո մաքսատունը տրամադրում է անհամապատասխանության մասին սերտիֆիկատ. եթե անհամապատասխանությունը կապված է անվտանգության, առողջության եւ շրջակա միջավայրի պահպանման հետ, ապա մաքսատունը գրավոր եղանակով ծանուցում է սննդամթերք ներմուծողին եւ նրանից պահանջում է տվյալ սննդամթերքի ոչնչացում կամ վերադարձ. եթե անհամապատասխանությունը կապված է այլ պահանջների հետ, ապա սննդամթերքի ներմուծումն իրականացվում է պատշաճ տեխնիկական մշակում եւ համապատասխանության կրկնակի ստուգում անցնելուց հետո: Եթե ներմուծվող համապատասխան սննդամթերքը սահմանված ժամկետում տեխնիկական մշակում չի անցնում կամ տեխնիկական մշակում անցնելուց հետո նախկինի նման չի համապատասխանում պահանջներին, ապա մաքսատունը ներմուծողից պահանջում է տվյալ մթերքների ոչնչացում կամ վերադարձ:

Հոդված 34. Չինաստանի սահմաններից դուրս սննդամթերքի անվտանգության հետ կապված միջադեպերի առաջացման դեպքում, որոնք Չինաստանի տարածքում կարող են հանգեցնել սննդամթերքի անվտանգության պոտենցիալ սպառնալիքի, կամ մաքսատան կողմից սննդամթերքի ներմուծման վերահսկողության եւ կառավարման ընթացքում ներմուծվող սննդամթերքի անհամապատասխանության, կամ սննդամթերքի անվտանգության հետ կապված այլ խնդիրների հայտնաբերման դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը եւ անմիջապես դրան ենթակա լիազորված մաքսային մարմինները, հիմնվելով ռիսկերի գնահատման արդյունքների վրա, կարող են ձեռնարկել հսկողության անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք ներմուծվող համապատասխան սննդամթերքի նկատմամբ վերահսկողության եւ ընտրանքային ստուգումների մասշտաբների ընդլայնումն են:

Եթե հսկողության այնպիսի միջոցների ընդունումից հետո, ինչպիսիք ներմուծվող սննդամթերքի նկատմամբ նախորդ կետի դրույթների համապատասխան վերահսկողության եւ ընտրանքային ստուգման մասշտաբների ընդլայնումն են, մաքսատունը կրկին հայտնաբերում է ներմուծվող սննդամթերքի անհամապատասխանություն կամ ներմուծվող սննդամթերքի լուրջ պոտենցիալ սպառնալիքների առկայության մասին վկայող որեւէ ապացույց, ապա Գլխավոր

մաքսային վարչությունը եւ դրան անմիջապէս ենթակա լիազորված մաքսային մարմինները կարող են սննդամթերք ներմուծողներից պահանջել մաքսատուն ներկայացնել տեսչական ստուգումներ անցկացնող որակավորված կազմակերպությունների կողմից տրված արտադրանքի խմբաքանակների ստուգման մասին հաշվետվություններ: Մաքսատունը պարտավոր է ստուգել սննդամթերք ներմուծողների կողմից տրամադրված ստուգումների մասին հաշվետվությունները:

Հոդված 35. Հետեւյալ հանգամանքներից ցանկացածի դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա կարող է ձեռնարկել հսկողության անհրաժեշտ միջոցներ. դրանք են՝ համապատասխան սննդամթերքի ներմուծման կասեցում կամ արգելք՝

1) արտահանող պետությունում (տարածաշրջանում) կենդանիներ եւ բույսերի շրջանում խոշոր համաճարակի կամ սննդամթերքի անվտանգության համակարգում լուրջ փոփոխությունների առաջացում, որոնք չեն կարող ապահովել Չինաստան արտահանվող սննդամթերքի անվտանգության արդյունավետ երաշխիքները.

2) ներմուծվող սննդամթերքում հայտնաբերվում են կարանտինային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ, կամ առկա են ապացույցներ, որ ներմուծվող սննդամթերքը կարող է կարանտինային վարակիչ հիվանդությունների փոխանցող լինել, ընդ որում՝ անհնար է իրականացնել արդյունավետ սանիտարական մշակում.

3) սույն միջոցների 34-րդ հոդվածի 2-րդ կետում նշված հսկողության միջոցները կիրառելիս մաքսատունը կրկին հայտնաբերում է, որ ներմուծվող համապատասխան սննդամթերքը չի համապատասխանում անվտանգության, առողջության պահպանության եւ շրջակա միջավայրի պահպանության պահանջներին.

4) օտարերկրյա արտադրական ձեռնարկությունները խախտում են Չինաստանի համապատասխան օրենսդրական եւ վարչաիրավական նորմերը, ընդ որում՝ առկա են ծանրացնող հանգամանքներ.

5) այլ տեղեկություններ, համաձայն որոնց հայտնաբերվում է, որ համապատասխան սննդամթերքը կրում է անվտանգության պոտենցիալ լուրջ

սպառնալիքներ:

Հոդված 36. Ներմուծվող սննդամթերքի անվտանգության ռիսկը մինչև վերահսկվող մակարդակը նվազեցնելու դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը եւ անմիջապես դրան ենթակա լիազորված մաքսային մարմինները կարող են չեղարկել հսկողության համապատասխան միջոցները հետեւյալ եղանակներով՝

1) եթե այն սննդամթերքը, որի վրա տարածվում են սույն միջոցների 34-րդ հոդվածի 1-ին կետում նշված հսկողության միջոցները, չեն ճանաչվել անհամապատասխան նշված ժամանակահատվածում եւ խմբաքանակի շրջանակներում, ապա ռիսկի գնահատումից հետո հսկողության միջոցները կարող են չեղարկվել:

2) եթե այն սննդամթերքի նկատմամբ, որի վրա տարածվում են սույն միջոցների 34-րդ հոդվածի 2-րդ կետում նշված հսկողության միջոցները, արտահանող պետությունը (տարածաշրջանը) ձեռնարկել է կանխարգելիչ միջոցներ, որոնցով, Գլխավոր մաքսային վարչության կողմից ռիսկի գնահատման համաձայն, կարող են ապահովվել սննդամթերքի անվտանգությունը եւ վերահսկվել կենդանիների ու բույսերի շրջանում համաճարակի առաջացման ռիսկը կամ նշված ժամանակահատվածում կամ խմբաքանակի շրջանակներում սննդամթերքը չի ճանաչվել անհամապատասխան, ապա ռիսկի գնահատումից հետո մաքսատուները կարող է չեղարկել այդ հսկողության միջոցները:

3) եթե այն սննդամթերքի նկատմամբ, որի ներմուծումը ժամանակավորապես կասեցվել կամ արգելվել է, արտահանող պետության (տարածաշրջանի) իրավասու մարմինը ձեռնարկել է ռիսկերի հսկողության միջոցներ եւ Գլխավոր մաքսային վարչության գնահատման ընթացքում սահմանվել է, որ տվյալ սննդամթերքը համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին, ապա ներմուծման կասեցման կամ արգելման միջոցները կարող են չեղարկվել: Այն սննդամթերքի նկատմամբ, որի ներմուծումը վերականգնվել է, Գլխավոր մաքսային վարչությունը, գնահատման արդյունքների հիման վրա, կարող է ձեռնարկել սույն միջոցների 34-րդ հոդվածով նախատեսված հսկողության միջոցները:

Հոդված 37. Եթե սննդամթերք ներմուծողը հայտնաբերում է, որ ներմուծվող սննդամթերքը չի համապատասխանում սննդամթերքի անվտանգությանը վերաբերող օրենսդրական ու վարչաիրավական նորմերին եւ պետական ստանդարտներին կամ ունի ապացույց այն մասին, որ տվյալ սննդամթերքը կարող է

վնաս հասցնել մարդու առողջությանը, ապա ներմուծողը, «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 63-րդ հոդվածի եւ 94-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան, պարտավոր է անհապաղ դադարեցնել տվյալ սննդամթերքի ներմուծումը, վաճառքը եւ օգտագործումը, հետ կանչել սննդամթերքը, այդ մասին ծանուցել արտադրական եւ գործառնական գործունեություն վարող համապատասխան կազմակերպություններին, անցկացնել հետ կանչված սննդամթերքի եւ ուղարկված ծանուցումների հաշվառումը, ինչպես նաեւ տեղական մաքսատուն փոխանցել տեղեկություններ՝ սննդամթերքի հետկանչի, ծանուցումների եւ այլ հանգամանքների վերաբերյալ:

Գլուխ 3. Սննդամթերքի արտահանումը

Հոդված 38. Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները պետք է ապահովեն, որ արտահանվող սննդամթերքը համապատասխանի ներմուծող պետության (տարածաշրջանի) ստանդարտներին կամ պայմանագրի պահանջներին. եթե Չինաստանի կողմից կնքված կամ Չինաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերը կամ համաձայնագրերը պարունակում են հատուկ պահանջներ, ապա արտահանվող սննդամթերքը պետք է համապատասխանի միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի պահանջներին:

Եթե ներմուծող պետությունը (տարածաշրջանը) չունի ստանդարտներ, չի ներկայացնում պահանջներ պայմանագրերի շրջանակներում եւ չունի Չինաստանի կողմից կնքված կամ Չինաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերում եւ համաձայնագրերում նշված համապատասխան պահանջներ, ապա արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները պարտավոր են ապահովել, որ արտահանվող սննդամթերքը համապատասխանի Չինաստանի՝ սննդամթերքի անվտանգության պետական ստանդարտներին:

Հոդված 39. Մաքսատունն արտահանվող սննդամթերքի վերահսկողությունն ու կառավարումն իրականացնում է օրենքին համապատասխան: Արտահանվող սննդամթերքի նկատմամբ վերահսկողության եւ կառավարման միջոցները ներառում են՝ արտահանվող սննդամթերքի համար հումքի աճեցման եւ բազմացման վայրերի գրանցում, արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գրանցում, ձեռնարկությունների ստուգում, փաստաթղթերի

ստուգում, տեղում տեսչական ստուգում, վերահսկողություն եւ ընտրանքային ստուգում, նավահանգիստների ընտրանքային ստուգում, օտարերկրյա հաշվետվությունների ստուգում, ինչպես նաեւ տարբեր միջոցների համակցում:

Հոդված 40. Արտահանվող սննդամթերքի համար հումքի աճեցման եւ բազմացման վայրերը պետք է գրանցված լինեն տեղական մաքսատան կողմից:

Գլխավոր մաքսային վարչությունը կազմում եւ հրապարակում է արտահանվող սննդամթերքի համար հումքի աճեցման եւ բազմացման գրանցված վայրերի ցանկը, գրանցման ընթացակարգերն ու պահանջները մշակվում են Գլխավոր մաքսային վարչության կողմից:

Հոդված 41. Օրենքին համապատասխան՝ արտահանվող սննդամթերքի համար հումքի աճեցման եւ բազմացման գրանցված վայրերի նկատմամբ վերահսկողությունը մաքսատունն իրականացնում է տվյալների վերլուծության, տեղում տեսչական ստուգման եւ ձեռնարկությունների ստուգման միջոցով:

Հոդված 42. Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները պետք է գրանցվեն տեղական մաքսատանը, գրանցման ընթացակարգերն ու պահանջները մշակվում են Գլխավոր մաքսային վարչության կողմից:

Հոդված 43. Եթե օտարերկրյա պետությունը (տարածաշրջանը) իրականացնում է տվյալ պետություն (տարածաշրջան) Չինաստանից արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գրանցման կառավարումը եւ դիմում է Գլխավոր մաքսային վարչություն՝ առաջարկությունների համար, ապա արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունը պետք է դիմում ներկայացնի տեղական մաքսատուն, որը, նախնական ստուգումից հետո, հաշվետվություն է ներկայացնում Գլխավոր մաքսային վարչություն:

Գլխավոր մաքսային վարչությունը ստացվող առաջարկությունների գրանցման աշխատանքը կազմակերպում եւ իրականացնում է ձեռնարկությունների վարկային վարկանիշի ստուգման, վերահսկողության ու կառավարման, ինչպես նաեւ տեղական մաքսատան սկզբնական ստուգման արդյունքների հետ համակցմամբ: Ստացվող առաջարկությունների գրանցման ընթացակարգերն ու պահանջները մշակվում են Գլխավոր մաքսային վարչության կողմից:

Հոդված 44. Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները պետք է ստեղծեն ու կատարելագործեն սննդամթերքի անվտանգության նկատմամբ սանիտարական հսկողության համակարգը, ապահովեն սննդամթերքի անվտանգության նկատմամբ սանիտարական հսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը եւ հետեւեն, որ արտահանվող սննդամթերքի արտադրությունը, վերամշակումն ու պահպանումը համապատասխանեն Չինաստանի օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին ու արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների անվտանգության սանիտարական պահանջներին. եթե ներմուծող պետության (տարածաշրջանի) համապատասխան օրենսդրական եւ վարչաիրավական նորմերն ու համապատասխան միջազգային պայմանագրերը եւ համաձայնագրերը պարունակում են հատուկ պահանջներ, ապա արտահանվող սննդամթերքը պետք է համապատասխանի այդ պահանջներին:

Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները պետք է ստեղծեն մատակարարների գնահատման համակարգ, ներմուծվող ապրանքների տեսչական ստուգումների հաշվառման համակարգ, արտադրական գրառումների հաշվառման ֆայլային համակարգ, արտազնա գործարանային տեսչական ստուգումների հաշվառման համակարգ, արտահանվող սննդամթերքի հետազոտման համակարգ եւ անհամապատասխան սննդամթերքի օգտահանման համակարգ: Համապատասխան գրառումները պետք է լինեն հավաստի եւ վավերական, գրառումների պահպանման ժամկետը պետք է կազմի սննդամթերքի պիտանիության ժամկետը լրանալուց հետո առնվազն վեց ամիս. կոնկրետ պիտանիության ժամկետի բացակայության դեպքում պահպանման ժամկետը պետք է կազմի երկու տարուց ավելի:

Հոդված 45. Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները պետք է ապահովեն, որ արտահանվող սննդամթերքի փաթեթվածքն ու փոխադրման եղանակը համապատասխանեն սննդամթերքի անվտանգության պահանջներին:

Հոդված 46. Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները փոխադրման փաթեթվածքի վրա պետք է գետեղեն արտադրական ձեռնարկության գրանցման համարը, ապրանքի անվանումը, խմբաքանակի համարը եւ արտադրման ամսաթիվը:

Եթե արտահանող պետությունը (տարածաշրջանը) ունի հատուկ պահանջներ, ապա արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունը կարող է ճշգրտել նախորդ կետում նշված՝ ապրանքների մակնշումը՝ մաքսատանն անմիջապես ենթակա մարմինների հետ համաձայնեցմամբ:

Հոդված 47. Մաքսատունն իրականացնում է իր իրավազորության ներքո գտնվող՝ արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների՝ սննդամթերքի անվտանգության նկատմամբ սանիտարական հսկողության համակարգի գործունեության վերահսկողությունն ու ստուգումը: Վերահսկողությունն ու ստուգումը ներառում են պարբերական եւ ամենամյա վերահսկողություն եւ ստուգումներ:

Վերահսկողությունն ու ստուգումը կարող են իրականացվել տվյալների վերլուծության, տեղում տեսչական ստուգման, ձեռնարկության ստուգման եւ այլ միջոցների միջոցով, ինչպես նաեւ օտարերկրյա հաշվետվությունների ստուգման, ընտրանքային ստուգման եւ արտահանվող սննդամթերքի՝ տեղում տեսչական ստուգման հետ համակցմամբ:

Հոդված 48. Արտահանվող սննդամթերքը, օրենքին համապատասխան, պետք է ստուգվի եւ ծագման վայրի մաքսատան կողմից ենթարկվի կարանտինի:

Արտաքին առևտրի կարիքներին, ինչպես նաեւ արտահանվող սննդամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի աշխատանքային պայմաններին համապատասխան՝ Գլխավոր մաքսային վարչությունը կարող է նշանակել մեկ այլ վայր՝ տեսչական ստուգման եւ կարանտինի անցկացման համար:

Հոդված 49. Գլխավոր մաքսային վարչության օրենսդրական եւ վարչաիրավական նորմերին ու դրույթներին համապատասխան՝ արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները ծագման վայրի մաքսատուն կամ արտահանվող սննդամթերքի կազմակերպման վայրի մաքսատուն պետք է ներկայացնեն դիմում՝ արտահանման հայտարարագիր ներկայացնելուց առաջ ստուգում անցնելու համար:

Ստուգում անցկացնելու մասին դիմումն ընդունելուց հետո ծագման վայրի կամ արտահանվող սննդամթերքի կազմակերպման վայրի մաքսատունն անցկացնում է այն արտահանվող սննդամթերքի՝ տեղում տեսչական ստուգումը, վերահսկողությունը եւ ընտրանքային ստուգումը, որը, օրենքին համապատասխան,

ենթակա է ստուգման եւ կարանտինի սահմանման:

Հոդված 50. Մաքսատունը մշակում է արտահանվող սննդամթերքի անվտանգության նկատմամբ վերահսկողության եւ ընտրանքային ստուգման ամենամյա պետական պլանը, ինչպես նաեւ կազմակերպում է այդ պլանի իրագործումը:

Հոդված 51. Եթե մաքսատան կողմից անցկացվող՝ տեղում տեսչական ստուգման, վերահսկողության եւ ընտրանքային ստուգման ընթացքում պարզվում է, որ արտահանվող սննդամթերքը համապատասխանում է պահանջներին, ապա մաքսատունը տալիս է հավաստագիր եւ թույլատրում է այդ սննդամթերքի արտահանումը: Ներմուծող պետության (տարածաշրջանի)՝ հավաստագրի ձեւին ու բովանդակությանը ներկայացվող պահանջների փոփոխման դեպքում փոփոխությունները կարող են կատարվել Գլխավոր մաքսային վարչության համաձայնությունն ստանալուց հետո:

Եթե մաքսատան կողմից անցկացվող՝ տեղում տեսչական ստուգման, վերահսկողության եւ ընտրանքային ստուգման ընթացքում պարզվում է, որ արտահանվող սննդամթերքը չի համապատասխանում պահանջներին, ապա մաքսատունն այդ մասին գրավոր ծանուցում է արտահանողին կամ նրա գործակալին: Արտահանվող սննդամթերքի տեխնիկական մշակում անցկացնելու անհրաժեշտության դեպքում արտահանումը կարող է իրականացվել տեխնիկական մշակում եւ համապատասխանության ստուգում անցկացնելուց հետո արտահանումը չի թույլատրվում, եթե սննդամթերքը չի ենթարկվել տեխնիկական մշակման կամ տեխնիկական մշակումից հետո չի անցել համապատասխանության ստուգում:

Հոդված 52. Սննդամթերքի արտահանումն իրականացնելիս սննդամթերքն արտահանողները կամ նրանց գործակալները, օրենքին համապատասխան, պարտավոր են մաքսատուն ներկայացնել վավերական հայտարարագիր:

Հոդված 53. Մաքսատունը ստուգում է արտահանվող սննդամթերքը նավահանգստում. եթե ստուգման ընթացքում հայտնաբերվում է անհամապատասխանություն, ապա տվյալ սննդամթերքն արտահանման չի թույլատրվում:

Հոդված 54. Այն դեպքում, երբ արտահանվող սննդամթերքի հետ կապված

առկա են անվտանգության մասով խնդիրներ, ինչպես հայտնում են միջազգային կազմակերպությունները կամ արտասահմանյան կառավարական հաստատությունները, Գլխավոր մաքսային վարչությունը կազմակերպում եւ անցկացնում է ստուգում, ինչպես նաեւ ձեռնարկում է այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են վերահսկողության եւ ընտրանքային ստուգման մասշտաբների ճշգրտումը, որակավորված տեսչական կազմակերպությունների կողմից տրված՝ արտադրանքն ըստ խմբաքանակների ստուգելու վերաբերյալ հաշվետվությունները սննդամթերքը ներմուծողների կողմից մաքսատուն ներկայացնելու պահանջը, օտարերկրյա պաշտոնական կազմակերպություններում գրանցման վերաբերյալ առաջարկությունների հետկանչը:

Հոդված 55. Այն արտահանվող սննդամթերքի անվտանգության հետ կապված խնդիրների առաջացման դեպքում, որոնք վնաս են հասցրել կամ կարող են վնաս հասցնել մարդկանց առողջությանն ու կյանքի անվտանգությանը, արտադրական եւ գործառնական գործունեություն վարող կազմակերպություններն արտահանվող սննդամթերքի մասով պետք է անհապաղ ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ վնասից խուսափելու կամ այն նվազեցնելու համար, ինչպես նաեւ իրավիճակի մասին հայտնեն տեղական մաքսատուն:

Հոդված 56. Արտահանվող սննդամթերքի նկատմամբ վերահսկողությունն եւ կառավարումն իրականացնելիս անվտանգության հետ կապված խնդիրների հայտնաբերման դեպքում մաքսատունը պարտավոր է այդ մասին հայտնել կառավարության՝ սննդամթերքի անվտանգության համար պատասխանատու իրավասու մարմիններին:

Գլուխ 4. Վերահսկողությունն եւ կառավարում

Հոդված 57. «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 100-րդ հոդվածին համապատասխան՝ Գլխավոր մաքսային վարչությունը հավաքագրում եւ ամփոփում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաեւ ստեղծում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերաբերյալ տեղեկատվության կառավարման համակարգ:

Մաքսային մարմինները, իրենց իրավագործության սահմաններում, բոլոր մակարդակներում պատասխանատվություն են կրում ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման եւ կանոնակարգման համար, ինչպես նաեւ, համապատասխան կանոնների համաձայն, տվյալ տեղեկատվությունը, իրենց իրավագործության սահմաններում, հայտնում են իշխանության տեղական մարմիններին, համապատասխան գերատեսչություններին, կազմակերպություններին ու ձեռնարկություններին: Եթե տեղեկատվությունը վերաբերում է այլ տարածաշրջանների, ապա այդ տեղեկատվությունը պետք է հայտնել նաեւ համապատասխան տարածաշրջանների մաքսային մարմիններին:

Ի լրումն «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 100-րդ հոդվածի դրույթների՝ մաքսատան կողմից հավաքագրված եւ կանոնակարգված՝ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է նաեւ տեղեկատվություն՝ օտարերկրյա սննդամթերքի նկատմամբ տեխնիկական առեւտրային միջոցների վերաբերյալ:

Հոդված 58. Մաքսատունը պետք է անցկացնի ռիսկերի ուսումնասիրություն եւ իր եզրակացությունը ներկայացնի ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգությանը վերաբերող հավաքագրված տեղեկատվության մասին, ինչպես նաեւ սահմանի հսկողության համապատասխան միջոցներ՝ ռիսկերի ուսումնասիրության եւ իր կողմից տրված եզրակացության արդյունքների համաձայն:

Հոդված 59. Չինաստանում եւ դրա սահմաններից դուրս սննդամթերքի անվտանգության կամ այնպիսի համաճարակային հիվանդությունների հետ կապված միջադեպերի առաջացման դեպքում, որոնք կարող են ազդեցություն ունենալ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության վրա, կամ սննդամթերքի ներմուծման կամ արտահանման ժամանակ սննդամթերքի անվտանգության հետ կապված լուրջ խնդիրների հայտնաբերման դեպքում մաքսային մարմինը պարտավոր է այդ մասին ժամանակին հայտնել Գլխավոր մաքսային վարչություն. Գլխավոր մաքսային վարչությունը, իրավիճակին համապատասխան, վաղ նախազգուշացում է թողարկում մաքսային համակարգի շրջանակներում ռիսկերի մասին եւ ռիսկերի մասին նախազգուշացմամբ շրջաբերականն ուղարկում է սննդամթերքի անվտանգության նկատմամբ վերահսկողության եւ կառավարման մարմիններ, Պետական խորհրդին առընթեր

առողջապահության եւ գյուղատնտեսության մարմիններ, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, սպառողներին ուղարկում է ռիսկերի մասին նախազգուշացմամբ շրջաբերական:

Ռիսկերի մասին նախազգուշացմամբ շրջաբերական թողարկելու դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը, շրջաբերականի պահանջներին համապատասխան, պարտավոր է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի նկատմամբ ձեռնարկել սույն միջոցների 34-րդ, 35-րդ, 36-րդ եւ 54-րդ հոդվածներում նշված հսկողության միջոցները:

Հոդված 60. Մաքսատունը մշակում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ռիսկերի նկատմամբ մոնիթորինգի ամենամյա պետական պլանը, ինչպես նաեւ պարբերաբար եւ մշտական հիմունքներով հավաքագրում է մոնիթորինգի տվյալներն ու համապատասխան տեղեկատվությունը՝ սննդային ծագման հիվանդությունների, սննդամթերքի վարակման եւ ներմուծվող ու արտահանվող սննդամթերքին վերաբերող վնասակար գործոնների վերաբերյալ:

Հոդված 61. Չինաստանի սահմաններից դուրս սննդամթերքի անվտանգության հետ կապված այնպիսի միջադեպերի առաջացման դեպքում, որոնք կարող են ազդեցություն ունենալ Չինաստանի վրա, կամ գնահատման ընթացքում անկառավարելի ռիսկերի հայտնաբերման դեպքում Գլխավոր մաքսային վարչությունը, միջազգային գործելակերպի համաձայն, կարող է, մաքսային համակարգի շրջանակներում, թողարկել ռիսկերի նախազգուշացմամբ շրջաբերական կամ ռիսկերի նախազգուշացմամբ շրջաբերականն ուղարկել սպառողներին, ինչպես նաեւ ձեռնարկել սույն միջոցների 34-րդ, 35-րդ եւ 36-րդ հոդվածներում նշված հսկողության միջոցները:

Հոդված 62. Մաքսատունը մշակում է կազմակերպում է սննդամթերքի ներմուծման ու արտահանման հետ կապված արտակարգ իրավիճակներում արձագանքման պլանի իրագործումը:

Հոդված 63. Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության նկատմամբ վերահսկողության ու կառավարման մասով պարտականությունները կատարելիս մաքսատունը, օրենքին համապատասխան, իրավունք ունի ձեռնարկելու հետեւյալ միջոցները՝

- 1) անցկացնել տեսչական ստուգում արտադրական եւ գործառնական

գործունեություն վարելու տեղում.

2) անցկացնել այն սննդամթերքի ընտրանքային ստուգում, որի մասով վարվում է արտադրական կամ գործառնական գործունեություն.

3) ծանոթանալ համապատասխան պայմանագրերի, հաշիվների, հաշվապահական գրքերի ու այլ կյուրների հետ եւ պատճենահանել դրանք.

4) կնքել կամ կալանքի տակ դնել այն սննդամթերքը, որի մասով առկա են ապացույցներ՝ սննդամթերքի անվտանգության պետական ստանդարտների անհամապատասխանության, անվտանգությանը հնարավոր սպառնալիքների առկայության կամ ապօրինի արտադրական եւ գործառնական գործունեություն վարելու մասին:

Հոդված 64. Օրենքին համապատասխան՝ մաքսատունն իրականացնում է ներմուծմամբ կամ արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների վարկային կառավարումը:

Հոդված 65. Օրենքին համապատասխան՝ մաքսատունն անցկացնում է ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի մասով արտադրական ու գործառնական գործունեություն վարող կազմակերպությունների, ինչպես նաեւ հոլմքի աճեցման եւ բազմացման գրանցված վայրերի ստուգումը:

Հոդված 66. Տարանցման կարգով փոխադրվող սննդամթերքը պետք է համապատասխանի Գլխավոր մաքսային վարչության կողմից ներկայացված՝ տարանցման կարգով փոխադրվող սննդամթերքի վերահսկողության կամ կառավարման պահանջներին: Տարանցման կարգով փոխադրվող սննդամթերքը տարանցման ժամանակահատվածի ընթացքում չպետք է բացվի կամ բեռնաթափվի տրանսպորտային միջոցներից՝ առանց մաքսատան թույլտվության, ինչպես նաեւ սահմանված ժամկետի ընթացքում պետք է դուրս բերվի երկրից:

Հոդված 67. Եթե ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի մասով արտադրական եւ գործառնական գործունեություն վարող կազմակերպություններն առարկություններ ունեն մաքսային ստուգման արդյունքների վերաբերյալ, ապա այդ կազմակերպությունները կարող են ներկայացնել կրկնակի ստուգում անցկացնելու մասին դիմում՝ ներմուծվող եւ արտահանվող ապրանքների կրկնակի ստուգման վերաբերյալ համապատասխան դրույթների համաձայն:

Մաքսատուները կարող է մերժել կրկնակի ստուգման անցկացումը հետեւյալ հանգամանքներից ցանկացածի դեպքում՝

1) ստուգման արդյունքների համաձայն՝ միկրոկենսաբանական ցուցանիշները գերազանցում են սահմանված նորմերը.

2) կրկնակի ստուգման ենթակա նմուշների պիտանիության ժամկետը լրացել է.

3) այլ պատճառներ, որոնցից ելնելով, նմուշները ենթակա չեն կրկնակի ստուգման:

Գլուխ 5. Իրավաբանական պատասխանատվությունը

Հոդված 68. Եթե գրանցման տեղեկություններում փոփոխությունների առաջացման դեպքում սննդամթերք ներմուծողը չի անցնում համապատասխան դրույթների համաձայն մաքսային մարմնում փոփոխություններ կատարելու ընթացակարգը, եւ կան ծանրացնող հանգամանքներ, ապա մաքսատուները նախազգուշացում է տալիս:

Եթե սննդամթերք ներմուծողը գրանցման ժամանակ տրամադրում է կեղծ տեղեկություններ, ապա մաքսատուները նշանակում է տուգանք՝ մինչեւ 10.000 յուանի չափով:

Հոդված 69. Եթե ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի մասով արտադրական ու գործառնական գործունեություն վարող կազմակերպությունները ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգությանը վերաբերող տեսչական ստուգումներ անցկացնելիս չեն համագործակցում մաքսատան հետ, հրաժարվում են հարցումներից կամ նյութեր տրամադրելուց կամ տրամադրում են փաստացի իրավիճակին չհամապատասխանող նյութեր, ապա մաքսատուները նախազգուշացում է տալիս կամ նշանակում է տուգանք՝ մինչեւ 10.000 յուանի չափով:

Հոդված 70. Եթե ներմուծվող չբաժնեծրարված սննդամթերքի նկատմամբ վերահսկողության ընթացքում մաքսատուները հայտնաբերում է, որ ներմուծվող բաժնեծրարված սննդամթերքի վրա առկա չէ մականշվածք չինարենով կամ

չինարենով մականշվածքը չի համապատասխանում սննդամթերքի անվտանգությանը վերաբերող վարչաիրավական նորմերին, պետական ստանդարտներին, իսկ սննդամթերքը ներմուծողը հրաժարվում է ոչնչացնել, վերադարձնել կամ տեխնիկական մշակման ենթարկել այդ սննդամթերքը՝ մաքսատան պահանջներին համապատասխան, ապա մաքսատունը նախազգուշացում է տալիս կամ նշանակում է տուգանք՝ մինչեւ 10.000 յուանի չափով:

Հոդված 71. Ներմուծվող սննդամթերքը մաքսատան կողմից սահմանված կամ ճանաչված վայրից առանց մաքսատան թույլտվության դուրս բերելու դեպքում մաքսատունը խախտողներին պարտավորում է ճշգրտումներ կատարել եւ նշանակում է տուգանք՝ մինչեւ 10.000 յուանի չափով:

Հոդված 72. Եթե հետեւյալ ապօրինի գործողությունները հասկացվում են որպես «սննդամթերքի արտահանում՝ սույն օրենքի դրույթների խախտմամբ», ապա, ինչպես նախատեսված է «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 129-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, մաքսատունը նշանակում է տույժ՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 124-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝

1) արտահանվող սննդամթերքում ինքնուրույն փոփոխություններ կատարելը՝ մաքսատան ստուգումն անցնելուց եւ հավաստագիր տրամադրելուց հետո.

2) կեղծ, կեղծված կամ անորակ սննդամթերքն արտահանելը կամ անորակ սննդամթերքը որպես համապատասխանության ստուգում անցած արտահանվող սննդամթերք ներկայացնելը.

3) գրանցման ընթացակարգ չանցած՝ արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկության կողմից արտադրված սննդամթերքն արտահանելը.

4) արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող՝ չգրանցված ձեռնարկության կողմից արտադրված սննդամթերքը գրանցում պահանջող պետություններ (տարածաշրջաններ) արտահանելը կամ արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող՝ գրանցված ձեռնարկության կողմից արտադրված՝ գրանցման ոլորտից դուրս գտնվող սննդամթերքն արտահանելը.

5) գրանցման ընթացակարգ չանցած՝ աճեցման եւ բազմացման վայրերում ստացված հումքի օգտագործմամբ՝ արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների կողմից արտադրված սննդամթերքն արտահանելը:

6) արտահանվող սննդամթերքի մասով արտադրական եւ գործառնական գործունեություն վարող կազմակերպությունների մոտ «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 123-րդ, 124-րդ, 125-րդ եւ 126-րդ հոդվածներում նշված հանգամանքներն առաջանալը, ինչը հանգեցնում է ներմուծող պետության (տարածաշրջանի) պահանջներին արտահանվող սննդամթերքի անհամապատասխանությանը:

Հոդված 73. Սույն միջոցների դրույթների խախտման դեպքում, ինչը հանգեցրել է հանցակազմի ձեւավորմանը, խախտողները, օրենքին համապատասխան, ենթարկվում են քրեական պատասխանատվության:

Գլուխ 6. Ծանոթագրություններ

Հոդված 74. Մաքսային վերահսկողության հատուկ գոտիների, բոնդային գոտիների, շուկայում գնման կամ փոքրածավալ մերձսահմանային առեւտրի համար նախատեսված՝ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումն իրականացվում են Գլխավոր մաքսային վարչության համապատասխան դրույթների համաձայն:

Հոդված 75. Փոստի, էքսպրես առաքման, մերձսահմանային էլեկտրոնային առեւտրի եւ ուղեւորափոխադրումների միջոցով մանրածախ առեւտրի համար նախատեսված՝ ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումն իրականացվում են Գլխավոր մաքսային վարչության համապատասխան դրույթների համաձայն:

Հոդված 76. Նմուշների, անվճար հուշանվերների, ցուցադրման ապրանքների եւ առեւտրային նպատակներով չօգտագործվող այլ սննդամթերքի, անմաքս սննդամթերքի, Չինաստանում օտարերկրյա դեսպանատների ու հյուպատոսությունների ու դրանց աշխատակիցների կողմից հասարակական եւ ինքնուրույն օգտագործման, ինչպես նաեւ չինական ձեռնարկությունների աշխատակիցների կողմից ինքնուրույն օգտագործման համար նախատեսված՝ արտասահմանում տեղաբաշխված սննդամթերքի վերահսկողությունն ու կառավարումն իրականացվում են Գլխավոր մաքսային վարչության

համապատասխան դրույթների համաձայն:

Հոդված 77. Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի մասով արտադրական ու գործառնական գործունեություն վարող՝ սույն միջոցներում նշված կազմակերպությունների շարքին են դասվում՝ սննդամթերքի օտարերկրյա արտադրողները, օտարերկրյա արտահանողները կամ գործակալները, սննդամթերքը ներմուծողները, արտահանվող սննդամթերքն արտադրողները, Չինաստան արտահանվող սննդամթերքի մասով գործունեություն վարող արտահանողները եւ համապատասխան աշխատակիցները:

Սույն միջոցներում նշված՝ սննդամթերքի արտադրությամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկություններ ասելով հասկանում ենք Չինաստան արտահանվող սննդամթերքի արտադրությամբ, վերամշակմամբ եւ պահպանմամբ զբաղվող օտարերկրյա ձեռնարկությունները:

Սույն միջոցներում նշված՝ ներմուծվող սննդամթերքի ներմուծողներ եւ արտահանողներ ասելով հասկանում ենք Չինաստան արտահանվող սննդամթերքի օտարերկրյա արտահանողները, գործակալները եւ ներմուծողները:

Հոդված 78. Սույն միջոցները մեկնաբանելու համար պատասխանատվությունը կրում է Գլխավոր մաքսային վարչությունը:

Հոդված 79. Սույն միջոցներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ, ուժը կորցնում են Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2011 սեպտեմբերի 13-ի թիվ 144 հրամանին համապատասխան հաստատված եւ Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 184 հրամանով ու Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանով վերանայված՝ «Ներմուծվող եւ արտահանվող սննդամթերքի անվտանգության ապահովման միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2000 թվականի փետրվարի 22-ի թիվ 20 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի ապրիլի 28-ի թիվ 238 հրամանին համապատասխան վերանայված՝ «Արտահանվող մեղրի նկատմամբ տեսչական ստուգման եւ կարանտինի վարչարարության մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր

պետական վարչության 2011 թվականի հունվարի 4-ի թիվ 135 որոշմանը համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Զրային արդյունահանման ներմուծվող եւ արտահանվող արտադրանքի տեսչական ստուգման եւ կարանտինի վերահսկողության եւ վարչարարության մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2011 թվականի հունվարի 4-ի թիվ 136 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Ներմուծվող եւ արտահանվող մսամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի վերահսկողության եւ վարչարարության մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2013 թվականի հունվարի 24-ի թիվ 152 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Ներմուծվող եւ արտահանվող կաթնամթերքի տեսչական ստուգման եւ կարանտինի մասով միջոցները», Որակի հսկողության, տեսչական ստուգման եւ կարանտինի հարցերով նախկին գլխավոր պետական վարչության 2017 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 192 հրամանին համապատասխան հաստատված եւ Գլխավոր մաքսային վարչության 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 243 հրամանին համապատասխան վերանայված՝ «Արտահանվող սննդամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների գրանցումը կառավարելու մասին կարգը»: